ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11 նոյեմբերի 2019 թվականի թիվ 443 Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼՈՒ, 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ, ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետով

կարգադրում եմ

1. ՀՀ Տավուշի մարզի 2019 թվականի սուբվենցիոն ծրագրերը մշտադիտարկելու և 2020 թվականի ծրագրերը կազմելու և մշտադիտարկելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

   Գուրգեն Հարությունյան – Աշխատանքային խմբի ղեկավար, Տավուշի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ

   Տիգրան Մուշեղյան – Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

   Ասքանազ Բաբլումյան – Տավուշի մարզպետարանի ֆինանս. և սոց.տնտ. վարչ. ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ

   Մանե Ղազումյան – Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

   Հայկ Փաշինյան – Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալ

   Տիգրան Սաքանյան – Տավուշի մարզպետի տեղակալի օգնական

2. Աշխատանքային խմբին՝

   1) սահմանել հսկողություն 2019 թվականի սուբվենցիոն ծրագրերի սահմանված ժամկետներում իրականացման նկատմամբ,

2) ապահովել համայնքների կողմից 2020 թվականի սուբվենցիոն ծրագրերի հայտերի մշակման գործընթացի կազմակերպումը և աշխատանքներն ավարտել 2021թ. հունվար ամսին,

3) աշխատանքների ընթացքի և արդյունքների վերաբերյալ զեկուցել շաբաթական պարբերականությամբ:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Թաթուլ Ստեփանյանին:

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

11.11.2019

X

ք.Իջևան
11 նոյեմբերի 2019թ